ՏԵՂԵԿԱՑՈՒՄ

Մեծավան համայնքի ավագանու արտահերթ նիստի վերաբերյալ

Համայնքը	Միջոցառման անվանումը	Օրը	Ժամը	Անցկացման վայրը
Մեծավան	Ավագանու հերթական նիստ	29. 12.2020թ.	12-00	**Մեծավանի** համայնքապետարան գ. Մեծավան Զ. Անդրանիկի 2

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

2020թ. դեկտեմբերի 29-ին Մեծավանի համայնքապետարանում կայանալիք համայնքի ավագանու արտահերթ նիստի

ժամը՝ 12-^{00}

1. Մեծավան համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 29-ի արտահերթ նիստի օրակարգը հաստատելու մասին

զեկ. Ա. Վարդանյան

2. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Մեծավան համայնքում 2021 թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին

զեկ. Ա. Վարդանյան

3. Համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական օգնություն հատկացնելու մասին

զեկ. Հ. Քաչակուլյան

4. Լոռու մարզի Մեծավան համայնքի 2021թվականի տարեկան բյուջեն հաստատելու մասին

զեկ. Ա. Վարդանյան

ՆԱԽԱԳԻԾ 53-Ա

ՄԵԾԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Ձեկ. *ԱՐՄԱՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածով՝ Մեծավան համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է.

Հաստատել Մեծավան համայնքի ավագանու 2020թվականի դեկտեմբերի 29-ի արտահերթ նիստի օրակարգը՝
1. Մեծավան համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 29-ի արտահերթ նիստի օրակարգը հաստատելու մասին
2. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Մեծավան համայնքում 2021 թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին
3. Համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական օգնություն հատկացնելու մասին
4. Լոռու մարզի Մեծավան համայնքի 2021թվականի տարեկան բյուջեն հաստատելու մասին

ՆԱԽԱԳԻԾ 54-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Ձեկ. *ԱՐՄԱՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ և 19-րդ կետերով, «Տեղական տուրքերի և վճարներ ի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ, 12-րդ, 13-րդ, 14-րդ հոդվածներով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-
րդ հոդվածով՝ Մեծավան համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է.

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Լոռու
մարզի Մեծավան համայնքում 2021 թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՆԱԽԱԳԻԾ 55-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՀԱՅԱՐՓԻ ՔԱՉԱԿՈՒԼՅԱՆ/

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետին, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածին, Մեծավան համայնքի ավագանու 2018 թվականի նոյեմբերի 30-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Մեծավան համայնքի կամավոր խնդիրները, կամավոր խնդիրներին ուղղված սեփական լիազորությունները և դրանց լուծման նպատակով իրականացման կարգը սահմանելումասին» թիվ 46-Ա որոշմանը համապատասխան, հիմք ընդունելով ստացված դիմումները և համայնքի զոհված զինծառայողների, զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկող հանձնաժողովի եզրակացությունները՝ Մեծավան համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է.

1. Բավարարել համայնքի բնակիչների դիմումները և համայնքի բյուջեից նրանց ընտանիքներին հատկացնել սոցիալական օգնություն՝ համաձայն հավելվածի:
2.Համայնքի ղեկավարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում բնակիչներին վճարել հատկացված գումարները:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՆԱԽԱԳԻԾ 56-Ն

ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐՄԱՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18. հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածով՝ Մեծավան համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է.

1.Հաստատել Մեծավան գյուղական համայնքի 2021թ. տարեկան բյուջեն՝
1.1 Եկամուտների գծով՝ 244597,9հազ.դրամ
Այդ թվում՝
· Վարչական բյուջեի մասով՝ 169694,9 հազ. դրամ
· Ֆոնդային բյուջեի մասով՝ 74903,0 հազ. դրամ
1.2 Ծախսերի գծով ՝ 244597,9 հազ.դրամ
Այդ թվում՝

· Վարչական բյուջեի մասով՝ 169694,9հազ. դրամ
· Ֆոնդային բյուջեի մասով՝ 74903,0 հազ. դրամ

2. Հաստատել Մեծավան գյուղական համայնքի 2021թվականի տարեկան բյուջեի եկամուտները ըստ առանձին եկամտատեսակների համաձայն թիվ 1 հատվածի:
3. Հաստատել Մեծավան գյուղական համայնքի 2021թվականի տարեկան բյուջեից հատկացումներն ըստ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման՝ համաձայն թիվ 2 հատվածի:
4. Հաստատել սույն որոշման 3-րդ կետով սահմանված բյուջետային հատկացումների հաշվին ֆինանսավորվող ծախսատեսակներն ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման՝ համաձայն թիվ 3 հատվածի:
5. Հաստատել սույն որոշման 3-րդ և 4-րդ կետերով սահմանված հատկացումների հաշվին ֆինանսավորվող ծախսերն ըստ առանձին ծրագրերի համաձայն թիվ 4 հատվածի:
6.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող 10-րդ օրը: